

նախ մի հշտում:

Ա. Գալայճյանը կարծում է, որ Դուրյանի տաղերի ազարտուն (երկրորդ) տետրը պարունակել է 36 քերթված (էջ է և թիվ): Նա հայտնում է նաև, որ այդ տետրակից այժմ պահպանում են 19—20 էջերը, որոնց վրա գրված են եղել «նալվածք մը» տաղի վերջին տունը, «նվաղ է. տարեգարձի Ազգային սահմանադրության» բանաստեղծությունը և «Հծծյունքի» առաջին երկու տունը: Իրականում տաղերի երկրորդ տետրը, ինչպես երևում է Ա. Զոպանյանի հրապարակած ցանկից, ժամանակին ունեցել է 38 քերթված, որոնցից «Իմ մահը» և «Ի՛նչ կըսեն» բանաստեղծությունները ևս Երուսաղեմի արխիվում բացակայում են: Այս տաղերը, որոնք գրված են եղել առանձին թղթերի վրա, Ե. Դուրյանը ժամանակին հանձնել է Ա. Զոպանյանին: Դա երկվում է գրողի եղբոր 1894 թ. մարտի 23-ի նամակի հետևյալ տողերից. «Դուրյանի «Ի՛նչ կըսեն» քերթվածին ձեռագիրն ինքրած էիք. «Իմ մահը»-ն ալ անոր հետ զրկեցի Ձեզ: Պ. Մարտի 17-ի հրապարակումների ձեռամբ գտնվող ևս դարձնելի հետո անցյալ ամառ Դավիթ Խաչիկյանի հանձնեցի բնագիրը թուղթերն Ձեզի տալու համար: Եթե Ձեզի չէ տված, ուրեմն յուր քով կմնան: Իրմե ուղղակի պահանջեցեք գտնենք»²⁰, Ինչ-

պես երևում է, ինքնագրերն այդպես էլ չեն վերագործվել Ե. Դուրյանին:

Եվ ապա, Պ. Դուրյանի արխիվը ժամանակին ավելի հարուստ է եղել: Այսպես, պատասխանելով Ա. Զոպանյանի հարցումին, Ե. Դուրյանը 1891 թ. սեպտեմբերի 30-ի նամակում հայտնել է, որ ինքը ունի եղբոր «Տիգրան Բ» ողբերգաշարի «առաջին երկու երեկույթներն»²¹: Իսկ Մ. Միհրդատյանցը նույն տարվա սեպտեմբերի 23-ի նամակում վկայում է, որ Ե. Դուրյանը պահում է «Վարդ և Շուշանի» 1869 թ. փետրվարի 22-ի թատերադրը, որտեղ տպագրվել է Պ. Դուրյանի «Հիշատակ» խորագրով բանաստեղծությունը²²: Տասնամյակներ անց Հակոբ Օշականը հավաստել է, որ ինքը Երուսաղեմում տեսել է Պ. Դուրյանի «Հայուհին» տաղի ինքնագիրը²³: Այդ նյութերի մասին Ա. Գալայճյանը ոչինչ չի հիշատակում: Կորե՞լ են դրանք, թե՞ խառնված են Ե. Դուրյանի թղթերին: Զմոռանանք, որ Ա. Սիմոնյանի վկայությամբ Պ. Դուրյանի արխիվն ինքը գտել է «խառնակյալ» վիճակում և ձեռագրերը տեղավորել է «ընդփույթ»: Պետք է հուսալ, որ Ա. Գալայճյանը այս ուղղությամբ ևս կշարունակի իր պրպրտումները և, ով դիտե, թերևս կհասնի ցանկալի արդյունքի:

Ա. ՇԱՐՈՒՐՅԱՆ

Армянское войско в XVIII веке. Из истории армяно-русского военного содружества. Исследование и документы. Подготовил к изданию А. Н. Хачатрян. Ереван, 1968, 475 стр., цена 1 р. 83 к.

Հայոց զորքը XVIII դարում. Հայ-ռուսական զինակցության պատմությունից: Ուսումնասիրություն և փաստաթղթեր: Աշխատասիրությամբ Հ. Ն. Խաչատրյանի, Երևան, 1968, 475 էջ, գինը 1 ռ. 83 կ.:

ՀՍՍՀ ԳԱ հրատարակչությունը Մաշտոցի անվան Մատենադարանի մականիշով լույս է տեսնում Հ. Ն. Խաչատրյանի «Հայոց զորքը XVIII դարում» աշխատությունը ուսուցչական, պրոֆ. Զ. Ն. Գրիգորյանի խմբագրությամբ:

Սովետահայ պատմագիտության մեջ հայ-ռուսական հարաբերությունների պատմությունը բավականաչափ ուսումնասիրված և լուսարանված է: Ակադեմիկոսներ Աշոտ Հովհաննիսյանը, Մկրտիչ Ներսիսյանը, Արզար Հովհաննիսյանը, պրոֆեսորներ Զ. Գրիգորյանը, Ա. Արրահամյանը, Վ. Պարսամյանը, պատմական գիտ. թեկնածու Վ. Ոսկանյանը և հանգուցյալ պատ-

մարան Պ. Հարությունյանը իրենց ուսումնասիրություններում ու հրատարակած ժողովածուներում հիմնավոր կերպով ցույց են տվել հայ-ռուսական դարավոր կապերի, բարեկամության ու համագործակցության նշանակությունը հայ ժողովրդի կյանքում: Այդ ուսումնասիրությունների մեջ այս կամ այն առիթով շո-

21 «Բանբեր Երևանի համալսարանի», 1967, № 1, էջ 167:

22 Նույն տեղում, 1968, № 1, էջ 147:

23 Հակոբ Օշական, Համապատկեր արևմտահայ գրականության, հատ. 2, Խոմանթիքներ, Երուսաղեմ, 1953, էջ 283, ծանոթություն:

20 ԳԱԹ, Ա. Զոպանյանի ֆոնդ, № 1740:

շափվել են նաև ռադմական առնչությունների հարցերը, խոսվել է ռուսական բանակում և հայրենիքում գտնվող հայկական կամավորական զնդերի զործունեության մասին: Սակայն հայ-ռուսական ռադմական համագործակցությունը և մասնավորապես հայոց զորքը XVIII դարում, ինչպես և ռուսական բանակի հետ զործող հայկական զորամիավորումների պատմությունը հատուկ ուսումնասիրության առարկա չի հանդիսացել, և մինչև վերջին ժամանակներս հրապարակի վրա չկար պատմական սյդ կարևոր իրադարձություններին նվիրված ամբողջական մի աշխատություն: Ահա այդ բացը լրացնելու է գալիս Հ. Խաչատրյանի վերոհիշյալ աշխատությունը:

Հեղինակը քրտնաջան աշխատանք է կատարել՝ ի մի հավաքելով հայկական զորքի, հայ-ռուսական և հայ-վրացական ռադմական համագործակցության վերաբերյալ բազմաթիվ վավերագրեր՝ Մոսկվայի Սովետական Միության կենտրոնական պետական պատմա-ռադմական (ЦГВИА СССР), Ռուսաստանի արտաքին քաղաքականության (АВПР), Աստրախանի մարզային (ГААО), Վրաստանի կենտրոնական պետական պատմական (ЦГИА Груз. ССР) արխիվներից, ինչպես նաև Մաշտոցի անվան Մատենադարանի, Հայաստանի և Մոսկվայի պետական պատմական թանգարանների համապատասխան ֆոնդերից: Գրախոսվող աշխատության մեջ ժամանակագրական կարգով զետեղված են 175 վավերագրեր և 50 փաստաթղթեր էլ տրված են հավելվածի ձևով: Հեղինակը վերոհիշյալ նյութերը մշակել, ծանոթագրել, մեկնաբանել և այդ վավերագրերի հիման վրա գրել է նաև ընդարձակ ուսումնասիրություն: Այսպիսով, աշխատությունը բաղկացած է երկու հիմնական մասից՝ ծավալուն ուսումնասիրությունից և փաստաթղթերից: Աշխատությունն ունի ծանոթագրությունների մեծ բաժին, բառարան, անձնանունների և աշխարհագրական տեղանունների ճշգրտված ցանկ:

Հեղինակը իր առաջ խնդիր է դրել արխիվային փաստաթղթերի և այլ սկզբնաղբյուրների հիման վրա շարագրել թուրքական և պարսկական լծից հայ ժողովրդին ազատագրելու նպատակով XVIII դարում վերածնված «Հայկական լրանակի» պատմությունը: Հայկական բանակի վերածնունդը XVIII դարում, հայկական կանոնավոր զորամիավորումների կազմակերպումը հետևանք էին հայ-ռուսական քաղաքական սերտ հարաբերությունների: Հեղինակը հայ ազատագրական շարժումը գիտել է ռազմագիտական տեսանկյունից, ներկայացնելով այն հայ-ռուսական քաղաքական հարաբերությունների ընդհանուր ֆոնի վրա, կապելով այդ հարաբե-

րությունները իրական հիմքերի վրա զնդ մեծ հայրենասեր ու հեռատես զործիչ Իսրայել Օրու ազատագրական ծրագրի հետ:

Խոսելով XVIII դարի առաջին երեսնամյակի ազատագրական շարժման և Ի. Օրու ծրագրի մասին, աշխատության հեղինակը ցույց է տվել, որ Ի. Օրին Պֆալցյան և Մոսկովյան ծրագրերի հեղինակ լինելուց բացի եղել է նաև մի քանի հարյուր տարվա ընդմիջումից հետո հայկական մշտական կանոնավոր զորքի վերստեղծման գործի ոգեշնչողն ու կազմակերպիչը:

Ուսումնասիրության մեջ քննության է առնված նաև Հայաստանի XVII դարի վերջի և XVIII դարի սկզբի սոցիալ-տնտեսական և քաղաքական իրավիճակը, այն ժանր կացությունը, որում գտնվում էին հայ ժողովրդի թե՛ արևմտյան և թե՛ արևելյան հատվածները, ենթարկվելով տնտեսական, կուլտուրական, կրոնական ու չաղաքական անասելի հարստահարումների: Այստեղից էլ հեղինակը միանգամայն տրամաբանական է համարում հայ ժողովրդի ազատագրական պայքարի, զինված ապստամբության անխուսափելիությունը: հետևաբար և հայկական զորքի կազմակերպման անհրաժեշտությունը, որպես հաղթանակի երաշխիք հայ ժողովրդի մղած արդարացի այդ պայքարում:

Աշխատության մեջ արծարծված է նաև հայ-վրացական հարաբերությունների և ռադմական համագործակցության հարցը՝ կապված հայ-ռուսական հարաբերությունների հետ: Ցույց է տրված, որ Անդրկովկասի երկու բախտակից ժողովուրդները՝ հայերն ու վրացիները, որոնք օտարերկրյա բռնակալների դեմ մղած համատեղ պայքարի դարավոր փորձ ունեին, Ռուսաստանի հետ ունեցած հարաբերություններում և ռադմական համագործակցության բնագավառում նույնպես հանդես էին գալիս միասին: Այդ համագործակցության մեջ առանձնապես մեծ դեր են խաղացել Վրաստանի հայերը, որոնք, ինչպես ճիշտ կերպով նկատել է անվանի հայագետ Ա. Ալպոյաճյանը, երբեք իրենց օտար չեն զգացել Վրաստանում, այլ ապրել են «Երկրին տեւերուն պես և ոչ քե իբրև ստրուկ կամ նվաստ զաղրական» («Պատմություն հայ զաղթականության», Կահիրե, 1955, հատ. Բ, էջ 343): Վրաստանի հայերը դարերի ընթացքում հանդես են եկել վրաց ժողովրդի հայրենասիրական այն ուժերի հետ, որոնք հերոսաբար պայքարել են իրենց հայրենիքը օտար նվաճողներից ազատագրելու համար: Ավելին. մինչև անգամ նրանց ներկայացուցիչները եղել են Վրաստանից Ռուսաստան ուղարկված զենպանությունների կազմում:

Այս կապակցությամբ աշխատության հեղինակը գրում է. «Վրաստանում ապրող հայ զոր-

ծիշները երկու երկրների (Վրաստանի և Ռուսաստանի) միջև քաղաքական հարաբերությունների հաստատման համար ոչ միայն Վրաստանի կողմից լիազորված դեսպաններ են եղել պաշտոնապես, այլև, ամենայն հավանականությամբ, ռուսական արքունիք են ներկայացրել նաև հայ ժողովրդի գեթ մի հատվածի՝ Վրաստանում ապրող ստվարաթիվ հայության քաղաքական որոշակի տրամադրությունները, որոնք պարսկաթուրքական բռնակալների դեմ իրենց մղած պայքարի հաջողության հույսերը կապել են Ռուսաստանից սպասվող օգնության հետ։ Ավելին. հավաստի աղբյուրներից երևում է, որ Վրաստանի թագավորների կողմից Ռուսաստան ուղարկված հայ բանագնացները բանակցությունների ժամանակ արծարծել են նաև հայ ժողովրդին հուզող հարցեր։ Պատահական չէ, որ բանակցությունների ժամանակ դեսպաններից ոմանք (Խուրշիդը, Արամը և ուրիշներ) իրենց համարում էին և Վրաստանի սահմանակից Հայաստանի հյուսիսային շրջանների ներկայացուցիչներ» (էջ 45—46)։ Մեզ թվում է, որ աշխատության հեղինակը իրավացի է։ Պատմական ճշմարտությունն այն է, որ հայերի և վրացիների իրավաքաղաքական դրությունը գրեթե նույնն էր. նրանք իրոք բախտակից ժողովուրդներ էին։ Փաստերը ցույց են տալիս, որ նրանց քաղաքական գործիչների հայացքներն ու համոզմունքներն էլ համընկնում էին, ուստի և համատեղ գործունեության ու գործողությունների համաձայնեցվածությունը դառնում էր օբյեկտիվ անհրաժեշտություն։ Պատահական չէ, որ հայերի Մոսկովյան ծրագրի շուրջը եղած բանակցություններին մասնակցում էր նաև վրաց արքայազն Արշիլը. ընդամենը համատեղ գործողությունների վերաբերյալ կայացվեց համաձայնություն։ Հատկանշական է և այն, որ երր Ի. Օրինի լինում է Անդրկովկասում, գործարար հարաբերությունների մեջ է մտնում նաև Վրաստանի ներկայացուցիչների հետ՝ համաձայնեցված գործողությունների ընդհանուր ճակատ ստեղծելու նպատակով, աշխատելով նախապատրաստել և հասունացնել երկու եղբայրական ժողովուրդների համատեղ պայքարը. մի հանգամանք, որը մի ավելորդ անգամ ևս ցույց է տալիս Օրու քաղաքական հեռատեսությունն ու ռազմագիտական իմացությունը։

Սկզբնաղբյուրներից որոշակիորեն երևում է, որ թե՛ վրաց, թե՛ հայոց գործիչները գիտակցել են, որ միայն իրենց ուժերի միավորման ճանապարհով և Ռուսաստանի օգնությամբ կարող են ազատագրվել պարսկաթուրքական լծից։ Ինչպես ուսումնասիրությունից, այնպես էլ հատկապես առաջին անգամ գիտական շրջանառության մեջ դրվող ռազմական բնույթի փաստա-

թղթերից երևում է, որ թեև հայկական զորքը քաղկացած է եղել առանձին միավորումներից և տեղաբաշխված է եղել այս կամ այն գավառի ամրացված վայրում և կոչվել է այդ գավառի անունով, բայց և այնպես հնարավորություն սահմաններում նրանք գործել են համաձայն ընդհանուր պլանի և նրա կազմակերպիչների ուղեկավարների կողմից իրավամբ կոչվել «Հայոց զորք»։ Ավելին. զորքն այդպես է կոչվել նաև ռուսական և վրացական պաշտոնական շրջաններում, ինչպես նաև թուրքական և պարսկական նվաճողների կողմից։ Վերջիններս նույնիսկ հարկադրված են եղել ոչ միայն ճանաչելու հայոց զորքը որպես պատերազմող կողմ, այլև պատերազմի դաշտում հանդիպելուց բացի դիվանագիտական բանակցություններ են վարել նրա հետ։ Հեղինակը ցույց է տալիս, որ հայոց զորքը 1722 թ. ամռանը, այսինքն՝ Պետրոս 1-ի «պարսկական արշավանքի» նախօրյակին, հասնում էր ժամանակի համար բավականին պատկառելի մի թվի։

Ուշագրավ է և այն, որ հեղինակը բանասիրական կարգի բազմաթիվ ճշգրտումներ է կատարել պարզելու զինվորականների ինքնությունը։

Աշխատության երկրորդ մասում զանազան արխիվներից ի մի են հավաքված շուրջ 225 արժեքավոր փաստաթղթեր, որոնք (բացառությամբ երեք փաստաթղթերի՝ №№ 13, 79, 170) դիտական շրջանառության մեջ են դրվում առաջին անգամ։ Պետք է ասել, որ ինչպես ուսումնասիրությունը, այնպես էլ փաստաթղթերը լույս են սփռում հայ ռազմական արվեստի, հայկական դորքի և ընդհանրապես ռուս-հայ զինվորական համագործակցության շատ անհայտ էջերի վրա։ Այդ փաստաթղթերը հնարավորություն են տալիս հստակ պատկերացում կազմելու հայկական դորքի կազմի, կառուցվածքի, ժամանակի ռազմական արվեստի, զենքի, հանդերձանքի, զինանշանների, հայ զորավարների, սպաների, շարքային զինվորների և նույնիսկ նրանց ընտանիքների անդամների բարոյական բարձր կերպարի մասին։

Աշխատությունը, անշուշտ, կշահեր, եթե հեղինակը ավելի հանգամանորեն խոսեր 1724 թ. հունիսի 12-ին Կոստանդնուպոլսում կնքված ռուս-թուրքական դաշնագրի մասին, կապեր այն հայկական կյանքի հարցերի հետ, վկայակոչեր այդ պայմանագրից հետո էլ ցարական արքունիքի կողմից հայերին ուղղված խոստումնալից ու հուսադրական նամակները և ցույց տար այն ծանր կացությունը, որի մեջ ընկավ հայ ժողովուրդը։ Հայտնի է, որ համաձայն 1732 թ. Ռեշտի ռուս-պարսկական պայմանագրի, Պարսկաստանին վերադարձվեցին Քուռի գետաբերանից

հարավ ընկած տերիտորիաները, իսկ ըստ 1735 թ. Դյանչայի տրակտատի՝ մերձկասպյան մյուս շրջանները, Բաջի ղրանից, անհեռատես Աննա Իվանովնա կայսրուհին, ընդառաջելով Պարսկաստանի ցանկությանը, միաժամանակ հրամայում է հայրենիք վերադարձնել ռուսական ծառայության մեջ գտնվող հայերին ու վրացիներին: Համաձայն այդ հրամանի, հակառակ իրենց և նույնիսկ ռուսական որոշ բարձրաստիճան հրամանատարների կամքին շատ հայերի ու վրացիների ծառայությունից ազատում և հանձնում են պարսկական կառավարությանը: Մարդիկ, որոնք արյուն էին թափել իրենց ազատու-

թյան և ռուսական զենքի հաջողության համար, ենթարկվում են հալածանքների, նույնիսկ մահապատժի: Նշված փաստերը, որոնք անմիջականորեն կապված են նյութի հետ, մանրակրկիտ խորությամբ չեն մեկնաբանված:

Հ. Ն. հաշատյանի աշխատությունը գրված է գիտական պատշաճ մակարդակով և մեծ հետաքրքրություն է ներկայացնում հատկապես XVIII դարում հայ ժողովրդի մղած ազատագրական պայքարի հարցերի լուսաբանման տեսակետից:

Յ. ՊՈՂՈՍՅԱՆ

Վ. Բ. ԲԱՐԽՈՒԴԱՐՅԱՆ, Նոր Նախիջևանի հայկական գաղութի պատմություն (1779—1861 թթ.), Հայկ. ՍՍՀ ԳԱ հրատարակչություն, Երևան, 1967, 499 էջ, գինը 1 ռ. 90 կ.:

В. Б. БАРХУДАРЯН. История Ново-Нахичеванской армянской колонии (1779—1861 гг.). Изд. АН Арм. ССР, Ереван, 1967, 499 стр., цена 1 р. 90 к.

Институт истории АН Армянской ССР опубликовал исследование В. Б. Бархударяна «История Ново-Нахичеванской армянской колонии (1779—1861 гг.)», в котором раскрыта яркая картина становления и дальнейшего развития армянского города на русской земле, у крепости Дмитрия Ростовского, на берегу Дона. Научная значимость рецензируемого труда определяется той ролью, которую сыграла эта крупнейшая армянская колония в экономической и культурной жизни Южной России, в укреплении исторических связей русского и армянского народов, их политическом и культурном сближении.

Из Крыма в Н. Нахичевань переселилось 12 600 армян, из которых 11 418 человек были из города, т. е. торгово-ремесленное население (вспомним, что в эти годы армянское население Еревана насчитывало 2369 человек, т. е. менее одной пятой части армян, переселившихся из Крыма на берег Дона). Население Н. Нахичевани росло быстро и в 1858 г. удвоилось. Город и армянские села Чалтырь, Топти, Мещала, Суутан-Сала и Несвитай освободились от рекрутов и налогов на 10 лет, получили материальную помощь, привилегии, право иметь свою самостоятельную церковную организацию, создать свой армянский

магистрат, управлять по традиционным армянским законам—армянским судебником, иметь свои школы и т. д. Претворение в жизнь обещаний русского правительства и создание благоприятных условий способствовали экономическому и культурному развитию города, сохранившему вместе с тем свой национальный облик. Автор книги приводит интересное свидетельство героя войны 1812 г. генерала Раевского, побывавшего вместе с А. С. Пушкиным в Ростове и Н. Нахичевани в 1820 г.: «...Город армянский. Нахичевань называемый, пространный, многолюдный и торговый, весьма богатый. Образ жизни, строения, лица, одевание—все оригинальное». Академик А. Демидов, побывавший в 1837 г. на юге России, пишет, что это «замечательный город». И по экономической и культурной роли, и по торговле, и по строительству и благоустройству Н. Нахичевань была признана одним из первых городов Новороссийского края (стр. 474).

В рецензируемой книге использованы многие материалы, касающиеся Н. Нахичевани, но хочется привести не замеченную автором небольшую заметку «О колониях южных областей России», которая была опубликована в 1819 г. в «Казанских известиях» (26 XI 1819 г., стр. 375—378).